«ՏՐԱՆՍ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ
«NATIONAL TRANS COALITION» HUMAN RIGHTS NGO

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տրանս անձանց նկատմամբ լայնորեն տարածվող ապատեղեկատվության և ատելության վերաբերյալ

Երևան, Հայաստան
12 նոյեմբերի, 2025թ.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Վերջին շրջանում Հայաստանում նկատվում է տրանս և գենդերային բազմազան անձանց նկատմամբ ապատեղեկատվության, միտումնավոր մանիպուլյացիայի և ատելության խոսքի վտանգավոր աճ: Ըստ «Տրանս ազգային կոալիցիայի» կողմից ՄԱԿ-ի Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով աշխատանքային խմբին ներկայացված վերջին ստվերային զեկույցի՝ ատելության խոսքը հատկապես տարածված է սոցիալական մեդիայում և մամուլում՝ սովորաբար անմիջապես այն հրապարակումներից հետո, որոնք առնչվում են տրանս և գենդերային բազմազան անձանց:

https://drive.google.com/file/d/1lznsiVtyC1gyP-yqKyB2cA8KKhoNQ3vf/view?usp=drive_link

Թեև վերջին տարիներին որոշ առաջընթաց արձանագրվել է, դեռևս բացակայում է խտրականության և բռնության դեպքերին արձագանքելու համապարփակ համակարգը, հատկապես տրանս երիտասարդների և առավել խոցելի խմբերի համար, ինչպես նաև առցանց ատելության դեմ պայքարի հստակ մեխանիզմները:

Այս փաստերը ընդգծում են, որ տրանս անձանց նկատմամբ ատելությունն ու ապատեղեկատվությունը ոչ թե միայն սոցիալական կամ մշակութային երևույթ են, այլ նաև կառուցվածքային և մարդու իրավունքների խնդիր: Որպես ազգային տրանս կոալիցիա՝ մենք բարձրացնում ենք մեր միացյալ ձայնը՝ հայտարարելով, որ տրանս անձինք Հայաստանի հասարակության անբաժանելի մասն են մեր ընտանիքներում, աշխատավայրերում, համայնքներում:
Տրանս անձանց որպես «ազգային ինքնությանը, բարոյականությանը կամ ավանդույթներին սպառնալիք» ներկայացնելու փորձերը սուտ և վտանգավոր են. նման պատումները խորացնում են պառակտումը, օրինականացնում խտրականությունը և շեղում հասարակության ուշադրությունը իրական մարտահրավերներից:

2. ՓԱՍՏԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ ԵՎ ՍԽԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐՔՈՒՄ

Մենք ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները՝ տարածված ապատեղեկատվական և վնասակար պատումները հերքելու համար՝

- Տրանս անձինք որևէ «սպառնալիք» չեն հայկական մշակույթի կամ արժեքների համար. նրանք ուսուցիչներ են, արվեստագետներ, ծնողներ, երիտասարդներ՝ հասարակության լիարժեք անդամներ:
- Տրանս անձանց որպես «անբարոյական» կամ «վտանգավոր» ներկայացնելը հիմնված է միայն խարանող և կեղծ պատկերացումների վրա: Հանրային վերաբերմունքը տրանս համայնքի նկատմամբ ծայրահեղ բացասական է, իսկ «տրանս» բառը շատերի կողմից ընկալվում է որպես վիրավորանք:
- Հայաստանում հաճախ սեքս-աշխատանքը, հիվանդությունները, ՄԻԱՎ-ը կամ «օտար օրակարգերը» կապում են տրանս ինքնության հետ՝ վախ և մեկուսացում առաջացնելու նպատակով: «Տրանս ազգային կոալիցիայի» և ԵԿՈՄ-ի համատեղ ստվերային զեկույցը ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական վերանայման (UPR) շրջանակում փաստում է, որ նման պատումները շարունակվում են տարածվել, իսկ օրենսդրական մակարդակով դրանց հակազդման մեխանիզմներ չեն մշակվում և իրականացվում: https://webtv.un.org/en/asset/k16/k16cne4td1?fbclid=IwY2xjawJ--cxleHRuA2FlbQIxMABicmlkETF1UG1NbXRsZUVOZjNZcUdXAR4BbpJemGuy05cCdTXBkLqo0BgROfRReRLbY5QeWanNE_MsVg_HyGj_R71q6A_aem_7MyIJ23Uvu3m8fwAT158cQ
- Մեդիա դաշտում և առցանց հարթակներում փաստագրված են բազմաթիվ դեպքեր, երբ ուղղակի ատելության խոսք է տարածվել մեկնաբանությունների և անգամ առանձին հոդվածների միջոցով:
- Խտրականության դեմ համապարփակ օրենսդրության բացակայությունը և գործող մեխանիզմների անարդյունավետությունը հանգեցնում են այն բանին, որ տրանս անձինք մնում են խոցելի հատկապես իրավական, սոցիալական և ֆիզիկական առումներով:

3. ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Մենք ամուր կանգնած ենք հետևյալ արժեքների կողքին՝

- **Ճշմարտություն և պատասխանատվություն հանրային խոսքում**. մեր քննարկումները գենդերի, իրավունքների և ներառականության մասին պետք է հիմնվեն ճշգրիտ տեղեկությունների, այլ ոչ թե վախի և մանիպուլյացիայի վրա:
- **Մարդկային արժանապատվություն և հավասարություն.** ինչպես երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի և այլ միջազգային փաստաթղթերով:
- **Միասնություն և կարեկցանք՝** հիմնված հայկական մշակույթի և համայնքային արժեքների վրա. մենք հավատում ենք՝ պետք է աջակցել միմյանց, ոչ թե մեղադրել:
- **Խոսքի և հավաքների ազատություն՝** առանց ատելություն, բռնություն կամ ապատեղեկատվություն տարածելու իրավունքի: Մեկի ազատությունը չի կարող վտանգել մյուսի անվտանգությունը:

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿՈԴ

Մենք դիմում ենք՝

1. **Մեդիա դաշտին, լրագրողներին և թվային հարթակներին**

- պահպանել էթիկայի նորմերը,
- ստուգել աղբյուրները,
- վերահսկել ատելության կոչերը մեկնաբանություններում,
- խուսափել չհաստատված պնդումներից տրանս անձանց մասին,
- հարթակ տրամադրել տեղեկացված ու հավասարակշիռ տրանս ձայներին:

2. Պետական մարմիններին, իրավապահ և մարդու իրավունքների հաստատություններին

- ներդնել հուսալի մեխանիզմներ ապատեղեկատվության և ատելության խոսքի մոնիթորինգի ու կանխման համար, այդ թվում՝
- ընդունել համապարփակ հակախտրական օրենսդրություն՝ ընդգրկելով գենդերային ինքնությունն ու արտահայտումը,
- ստեղծել ատելության հանցագործությունների և խոսքի փաստագրման միասնական համակարգ,
- ապահովել զոհերի արդարադատության հասանելիություն և պաշտպանություն՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ECHR) առաջարկությունների:

3. Քաղաքացիական հասարակությանը, կրթական հաստատություններին և առցանց համայնքներին

- համագործակցել իրազեկման, հակազդման մեխանիզմների մշակման նախաձեռնությունների, մեդիա գրագիտության և աջակցության ցանցերի զարգացման համար:

4. Հայաստանի հանրությանը

- դրսևորել քննադատական մտածողություն. պահանջել փաստեր, հակազդել խարանող լեզվին,

- համերաշխություն դրսևորել հայ տրանս համայնքին և գիտակցել, որ ճշմարտության, արժանապատվության և անվտանգության համար պայքարը միաժամանակ պայքար է ավելի ուժեղ և ներառական Հայաստանի համար:

5. ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՅՍ

«Տրանս ազգային կոալիցիան» շարունակում է իր հանձնառությունը՝ կառուցելու մի ապագա, որտեղ յուրաքանչյուր մարդ Հայաստանում՝ անկախ իր գենդերային ինքնությունից կամ արտահայտումից, կարող է ապրել անվտանգ, արժանապատիվ և իրապես ազատ: Մենք շարունակելու ենք աշխատել մեդիայի, քաղաքական որոշում կայացնողների և համայնքների հետ՝ խթանելու գիտակցությունը, ապահովելու հաշվետվողականությունը և ամրապնդելու մեր համատեղ դիմադրողականությունը ապատեղեկատվության և ատելության դեմ:

«ՏՐԱՆՍ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ
«NATIONAL TRANS COALITION» HUMAN RIGHTS NGO

«ՏՐԱՆՍ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱ»

Երևան, Հայաստան
ntcoalition.ngo@gmail.com | @ntcarmenia